

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ
դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ձևավորող գնահատման արդյունավետ ձևերի և հնարների կիրառումը

Կատարող՝ Անահիտ Բրուդյան

Ղեկավար՝ Գայանե Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն	2
Ինչ է գնահատումը	4
Ընթացիկ գնահատում	6
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈԻ) սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները	10
Գծային հավասարումների դասակարգումը	14
Եզրակացություն	16
Գրականություն	17

Ներածություն

Գնահատման դերը ուսուցման և ուսումնասիրության պրոցեսում

Սովորողների ուսումնասիրության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը:

Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով օգտագործվում են **միավորային** (քանակական) և **ուսուցանող** (ձևավորող) գնահատման արդյունքները:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնասիրության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Գնահատում տերմինը մինչ այժմ մենք հիմնականում օգտագործել ենք չափման իմաստով, չենք տարբերակել «գնահատում» ու «գնահատական տալ» արտահայտությունների իմաստները, բայց ներկայումս այն ձեռք է բերել այլ իմաստներ: Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում ունի, քան չափումը: Ուսուցիչների համար գնահատման նպատակը, սովորաբար,

սովորողների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է սովորողների առջև ծառայած դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու ճիշտ ուղղությունը:

Ուսումնական գործընթացում սովորողների գնահատումը հիմնականում ամփոփում է այն, թե դասավանդման ընթացքում գնահատման միջոցով, ուսուցիչն ինչ խնդիրներ է տեսնում, դրանց լուծման համար ինչ ուղիներ է առաջադրում և ինչ որոշումներ է կայացնում: Այդ խնդիրներից են՝

- Արդյո՞ք դասը ցանկալի հունով է ընթանում:
- Ի՞նչ պետք է անել դասն ավելի արդյունավետ դարձնելու համար:
- Արդյո՞ք սովորողներն ըմբռնում ու յուրացնում են դասավանդվող ուսումնական նյութը:
- Ինչքանո՞վ է յուրաքանչյուր սովորող յուրացնում նոր նյութը:
- Ե՞րբ կատարել հարցումներ և տալ թեմատիկ գրավոր աշխատանքներ:
- Սովորողները պատրա՞ստ են արդյոք անցնելու ծրագրով նախատեսված հաջորդ ուսումնական նյութին:

Ըստ ընթացիկ գնահատման մեթոդաբանության՝ գնահատումը տրոհվում է կանոնակարգված երկու հիմնական ձևերի՝ **միավորային և ուսուցանող** գնահատում:

Ի՞նչ է գնահատումը

Գնահատումը ուսուցման գործընթացի վերաբերյալ և նրա կատարելագործման համար փաստեր, հավաստի, բազմակողմանի տվյալներ հավաքագրելու շարունակական գործընթաց է՝ ուղղված ուսուցման գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը: Այն պետք է արտացոլի առկա լավագույն փորձը, ներկայացնի տարբեր կողմերից, խթանի սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

գնահատումն իրականացնում է.

- առաջին հերթին սովորողների ուսումնառության գործընթացը բարելավելու,
- երկրորդ՝ սովորողների ձեռքբերումները և ազգային ուսումնական ծրագրերի բովանդակությանն ու պահանջներին համապատասխանեցնելու,
- երրորդ՝ դպրոցական համայնքին սովորողների ուսումնառության ընթացքի ու արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Ապահովում ենք, որ գնահատումը լինի.

- . համապատասխան
- . հավաստի
- . համարժեք
- . կառավարելի
- . անկողմնակալ
- . արդար
- . արժանահավատ
- . ապահով
- . թափանցիկ

Գնահատում իրականացնելիս դպրոցը կարևորում է յուրաքանչյուր սովորողի ուսումնառությունը հետազոտությունների միջոցով և հենվում է ուսուցման ընթացքի ու արդյունքների որակի վրա:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից



ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով,


միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի (թեմաների) յուրացման աստիճանն ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու և հաշվառելու միջոցով:



Ուսուցանող գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ:

ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ



Նկատի ունենալով, որ ուսուցման գործընթացի արդյունքն, ըստ էության, կախված է ուսուցիչ-սովորող կամ սովորեցնող-սովորող փոխգործառնությունից, խնդրի լուծման հիմքը պետք է փնտրել հենց այդտեղ:

Խնդրի ժամանակակից լուծման հիմքում բարեփոխումներին նպաստող գնահատման նոր համակարգի ներդրումն է:

Ընթացիկ գնահատման համակարգ ասելով՝ հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից սովորողների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծական հաշվետվություն և գնահատման աշխատանքների կառավարում:

Հանրակրթությունում գործող գնահատման անցումային կամ, որ նույնն է, նախկինից եկող ավանդույթները դեռևս պահպանող համակարգն այլևս չի համապատասխանում հասարակական հարաբերությունների ժամանակակից պայմաններին: Գնահատման այդպիսի համակարգը քիչ չափով է նպաստում կրթության առաջընթացի խոչընդոտների վերացմանը և ուսուցիչ-սովորող աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Չունենալով գնահատումների համակարգված և վերահսկելի կարգ՝ այն մեծ չափով կախված է լինում անձնական հայեցողությունից, իսկ աշակերտին դրված գնահատականը հավաստի չէ: Դրա հետևանքով ծագում են տարաբնույթ դժգոհություններ, ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք չեն նպաստում ո՛չ կրթության որակի բարելավմանը և ո՛չ էլ բարեխիղճ ուսուցչի կամ կրթության ոլորտի այլ աշխատակցի պաշտպանվածությանը: Այդ և այլ խնդիրների լուծմանն է ուղղված ընթացիկ գնահատման ներդրվող մեթոդաբանությունը:

Ուսումնական գործընթացում սովորողների գնահատումն ու արժևորումը հիմնականում ամփոփում են այն, թե դասավանդման ընթացքում գնահատման և արժևորման միջոցով ուսուցիչն ինչ խնդիրներ է տեսնում, դրանց լուծման համար ինչ ուղիներ է առաջադրում և ինչ որոշումներ է կայացնում:

Ընթացիկ գնահատման համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառնությունները.

- ճշգրտել յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել նրա ուսումնական ակտիվությունը,
- հայտորոշել ուսուցման ընթացքն ու արդյունքները,
- շաղկապել ուսուցումն ուսումնառության հետ,
- փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ,
- հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը՝ մեկնարկային վիճակի նկատմամբ,
- վերահսկել ուսուցման գործընթացն ու արդյունքները:

Ընթացիկ գնահատումները տրոհվում են երկու գլխավոր ձևերի՝ **միավորային և ուսուցանող:**

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել, գնահատական տալ կամ չափել ուսումնական գործընթացում սովորողի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշչով ու ծրագրով: Մեր երկրում կիրառության մեջ է եղել հիմնականում գնահատման այդ ձևը, որի իրագործման կարգով պայմանավորված՝ գնահատականի հավաստիության աստիճանը ցածր է: Այդ դեպքում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը: Գնահատման նոր համակարգում միավորի հավաստիության աստիճանն անհամեմատ բարձր է:

Գնահատման երկրորդ ձևը նախատեսում է գնահատումների կամ արժևորումների օգտագործում՝ զուտ սովորելու և սովորեցնելու նպատակով: Այն անվանում են **ուսուցանող գնահատում** կամ գնահատում՝ սովորելու համար: Գնահատման այս բաղադրիչի նպատակն, ըստ էության, միտված է կրթության որակի բարելավմանը՝ հատկապես թույլ և միջին ունակություններ ցուցաբերող սովորողների համար:

Սովորողի ընթացիկ գնահատման հայեցակարգի նախագծում ներկայացված են գնահատման նշված երկու ձևերը, դրանց կիրառման պարտադիր և ցանկալի տեսակները, քանակներն ու տևողությունները: Երկուսն էլ վերահսկելի են և գրեթե

բացառում են սուբյեկտիվությունը:

Գնահատման այդ երկու ձևերի նպատակներն էապես տարբեր են:

Միավորային գնահատումն ունի կրթության որակը վերահսկող դեր: Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնասիրելուց հետո՝ կիսամյակի ընթացքում՝ գիտելիքի, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակն ամրագրելու, գործնական աշխատանքների կատարման կամ ուսումնական այլ հմտությունների որակը թվանշանով արտահայտելու համար: Թվանշանային գնահատականի օգնությամբ արձանագրվում է տվյալ նյութին սովորողի տիրապետման աստիճանը: Միավորային գնահատումն ունի «մրցակցային» բնույթ: Ստացած միավորների միջոցով սովորողները համեմատվում են մեկը մյուսի հետ: Այս գնահատման արդյունքներն օգտագործվում են կրթության որակի հաշվետվության և սովորողի կրթական ձեռքբերումների ներկայացման նպատակով:

- Ուսուցանող գնահատման մեկ փուլը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով. ընթացիկ գնահատումը ներառում է ուսումնական գործընթացի գնահատումները՝ բացառությամբ կիսամյակային ամփոփիչ աշխատանքների ու քննությունների:
- Ընթացիկ գնահատումների կիրառման մեկ լրիվ փուլը նախատեսված է մեկ կիսամյակի համար:
- Կրթության որակի բարելավման աշխատանքների ներկա փուլում կարևոր են համարվում կատարված ուսումնական աշխատանքների հաշվառումներն ու հաշվետվությունները:
- Հաշվետվությունները պարունակում են նաև վերլուծություններ, որոնք կնպաստեն կրթության որակի հետագա բարելավմանը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ուսումնական ծրագրերի ու չափորոշիչների վերանայմանը:

Ընթացիկ գնահատման նոր համակարգը պարունակում է ևս մեկ նորույթ, այն է՝ պաշտոնական գրանցումների համար գնահատման միավորային սանդղակի գործածումը: Այդ սանդղակը մեզանում գործում է երաժշտական և բժշկական ուսումնական հաստատություններում: Այդ սանդղակով անցողիկ են համարվում չորս և ավելի միավորները: 10 միավորային սանդղակով գնահատման դեպքում գործածության մեջ են մտնում նաև մեկից մինչև երեք միավորները, քանի որ գնահատումների նոր

համակարգում յուրաքանչյուր թվանշան ազդեցություն ունի կիսամյակային գնահատականի ձևավորման վրա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները

Շատ կարևոր է հիշել, որ սովորողը դպրոցում գտնվում է սովորելու համար: Այսինքն՝ ուսուցանող փուլի ցանկացած և բոլոր տեսակի գնահատումներն արժեք ունեն միայն այն դեպքում, երբ աջակցում են ուսումնառությանը: Ուսուցիչը կատարում է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության գործընթացի կազմակերպչի դերը:

Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար մշակված մեթոդներն իրականում շատ արդյունավետ են բոլոր սովորողների համար:

Ուսուցանող ստուգման հիմնական ձևերի կիրառումն ուսումնական գործընթացում

Ուսուցանող ստուգումը ուսուցչի կողմից սովորողի առաջընթացը խթանելու նպատակով, նրա առաջադիմությունը բացահայտելու և տարբեր ձևերով ու մեթոդներով թերըմբռնումների ու թերությունների վերացմանը նպաստող գործընթաց է: Այն միջոց է սովորողի ուսումնական գործունեությունը զննելու և բարելավելու համար: Ուսուցանող ստուգումը կարելի է իրագործել տարբեր մեթոդներով, խմբային և անհատական աշխատանքներով: Ուսումնական գործընթացում, որպես երաշխավորված ձև, կիրառում են՝ ուսուցանող թեստ (*հարցարան*), ինքնուրույն աշխատանք, սովորողին հանձնարարված շնորհանդես (պրեզենտացիա), ուսուցչի

կողմից կազմված քարտ, պաստառի միջոցով տրվող հանձնարարություն, թելադրություն:

Ստորև ներկայացնում եմ « Գծային հավասարումներ » թեմայի ուսումնական գործընթացում կիրառելի ուսուցանող ստուգման հիմնական ձևերի նմուշներ:

1. Ուսուցանող թեստ

Նպատակ և խնդիրներ. նպաստել սովորողների առաջադիմության խթանմանը , գիտելիքների ձեռքբերմանը, նրանց առաջընթացի բարելավմանը , ալգորիթմական մտածողության զարգացմանը, համագործակցային հմտությունների ձևավորմանը, հետադարձ կապի ապահովմանը:

Ուսուցանող թեստը լուսաբանող օրինակ Թեստի
հարցերին սույն, պատասխանեցեք իսկույն. Հարց 1.

Ճի՞շտ է, որ $5x - 54 = 3x + 6$ հավասարումը լուծելու համար պետք է անհայտները հավաքել հավասարման մի մասը , իսկ հայտնիները` մյուս մասը:

Հարց 2. Ճի՞շտ է, որ $3x$ գումարելին ձախ մասը տեղափոխելով գրում են $-3x$, իսկ -54 գումարելին աջ մասը տեղափոխելով գրում են $+54$:

Հարց 3. Ճի՞շտ է, որ այդ տեղափոխություններից հետո ստացվում է $5x - 3x = 6 + 54$:

Հարց 4. . Ճի՞շտ է, որ նման գումարելիները միացնելուց հետո կունենանք հետևյալ հավասարումը. $2x = 60$

Հարց 5. Կարո՞ղ ենք պնդել, որ $a / 2x = 60$ հավասարման արմատը 30 թիվն է, $b / 2x = 60$ հավասարման երկու մասերը 2-ի բաժանելիս կստացվի $x = 30$

Հարց 6. Կարո՞ղ ենք ասել, որ 30 թիվը հանդիսանում է նաև սկզբնական հավասարման արմատ, քանի որ կատարվել են համարժեք ձևափոխություններ:

Հարց 7. Կարելի՞ է պնդել, որ նշված հավասարումն այլ արմատներ չունի:

2. Ինքնուրույն աշխատանք

Նպատակ և խնդիրներ. նպաստել սովորողների իմացական կարողությունների ձևավորմանը ինքնուրույն աշխատելու հմտությունների զարգացմանը, ինքնագնահատման ու ինքնադրսևորման կարողությունների ձևավորմանը:

Հայտնի է, որ $a \neq 0$ դեպքում $ax=b$ գծային հավասարումն ունի մեկ արմատ, a
 $=0$, $b \neq 0$ դեպքում` արմատ չունի, իսկ $a=0$, $b=0$ դեպքում` ունի անթիվ արմատներ:

1. Լուծել հավասարումը. $a / 3x-8=x+6$, $b / 5 \cdot (x+2)=10+5x$, $c / 30x-1=30x+59$

Մինչ հավասարում կլուծեք հատ-հատ, իմացե՛ք հաստատ, թե ի՛նչ է արմատ

2. k -ի ի՞նչ արժեքի դեպքում $(k-2)x = 25$ հավասարումը լուծում չունի

3. $p \cdot y = y + p - 1$ հավասարումը p -ի, n° ր արժեքի դեպքում կունենա անթիվ լուծումներ

3. Սովորողին հանձնարարված շնորհանդես (պրեզենտացիա)

Նպատակ և խնդիրներ՝ նպաստել սովորողների ալգորիթմական մտածողության զարգացմանը, կողմնորոշվելու և աշխատանքը ներկայացնելու կարողությունների ձևավորմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը:

Մեկ անհայտով գծային հավասարումներ

$$ax+b=0$$

1. Եթե $a \neq 0$, ապա $ax+b=0$ հավասարումն ունի միակ արմատ՝ $x = \frac{b}{a}$

2. Եթե $a = 0$, $b \neq 0$, ապա $ax+b=0$ հավասարումն արմատ չունի

3. Եթե $a = 0$, $b = 0$, ապա $ax+b=0$ ունի անթիվ արմատներ՝ ընդ որում ցանկացած թիվ արմատ է:

Գծային հավասարումների դասակարգումն ըստ լուծման դեպքերի

1)	2)	3)
$3x+102$	$0 \cdot x = 14$	$0 \cdot x = 0$
$-2x+10=0$	$0 \cdot y - 195=0$	$-0 \cdot x = 0$
$0,5y=0$	$1200+0 \cdot z = 46$	$5-x=5-x$
$7,1z=1,86$	$2,67-0 \cdot x = 4,39$	$0=0 \cdot y$
$4x=k$	$7=0 \cdot x$	$k \cdot x=x \cdot k$

Գծային հավասարումների լուծումը

1)	2)	3)
$3x-12=5x+26$	$3 \cdot (x-2)=3x+4$	$4x+8=4(x+2)$
$3x-5x=26+12$	$3x-6=3x+4$	$4x+8=4x+8$
$-2x=38$	$3x-3x=4+6$	$4x-4x=8-8$
$x=38 : (-2)$	$0 \cdot x=10$	$0 \cdot x=0$
$x=-19$	x -ի այդպիսի արժեք չկա	x -ի կամայական արժեք արմատ է
Պատ.՝ -19	Պատ.՝ արմատ չունի	Պատ.՝ ցանկացած թիվ արմատ է

4. Ուսուցչի կողմից կազմված քարտ

Նպատակ և խնդիրներ. նպաստել սովորել սովորեցնելու գործընթացին, սովորողների համագործակցային հմտությունների ձևավորմանը, ուսումնական առաջընթացին, հետադարձ կապի ապահովմանը, թերությունների շտկմանը, սոցիալական հմտությունների զարգացմանը:

Կատարել հետևյալ առաջադրանքները.

1. Քանի՞ աստիճանով հետևյալ հավասարումները.

$$2 \cdot (x+1)=2x+2, \quad 3+4, 1x = 0, \quad 0 \cdot x=6 \quad 2.$$

Նշված ասույթների և հավասարումների միջև ստեղծեք համապատասխանություն.

- ❖ Մեկ աստիճանով հավասարում ▪ $3x-6=(x-2) \cdot 3$
- ❖ Արմատ չունեցող հավասարում ▪ $2x+8=5x+8$
- ❖ Անթիվ աստիճանով հավասարում ▪ $x+1=x-10$

3. 1, 4, -9, 17 թվերից n -րդն է $7-2 \cdot (x-9)=3x+5$ հավասարման արմատը.

Հավասարման մեջ, հերթով, ուշադիր,
Անհայտի փոխարեն տրված թվերը դիր,
Հավասարության դեպքի թիվն ընտրիր
Ու որպես պատասխան՝ առանձին գրիր:


4. Ներկայացրեք $7-2 \cdot (x-9)=3x+5$ հավասարման լուծումը.

5. k -ի n -րդ արժեքի դեպքում $3x-45=3 \cdot (x-k)$ հավասարումն ունի անթիվ արմատներ

5. Պաստառի միջոցով տրվող հանձնարարություն

Նպատակ և խնդիրներ. նպաստել սովորողների ուսումնական առաջընթացին, խոչընդոտների հաղթահարմանը, թերությունների վերացմանը, հասկացություններ դասակարգելու հմտությունների զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը:

Գծային հավասարումների դասակարգումը



Գծային հավասարումների օրինակներ

1/ $0 \cdot x = 4$; 2/ $3x = 21$; 3/ $0 \cdot x = 0$; 4/ $1,8 - 0,2x = 0$; 5/ $2 + 4x = 2$

Լրացնել աղյուսակի դատարկ վանդակները

a	b	հավասարումը	արմատների թիվը
267	125		
		$-3,592x = 0$	
	71		արմատ չունի
			անթիվ է

Պահպանելով նշված աշխատանքների ուսուցանող բնույթը, ուսուցիչը բացահայտում է սովորողի առաջադիմությունը, ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, թերըմբռնումները, թերացումները: Այնուհետև, իրավիճակից ելնելով, տարբեր մեթոդներով ու հնարներով իրականացնում է հետադարձ կապ, որը համապատասխան մեկնաբանությունների, վերլուծություն-ների, խորհրդատվությունների, դիտողությունների, քննարկումների միջոցով հանգեցնում է թերությունների վերացման կամ շտկման գործողությունների: Արդյունքում՝ մեթոդամանկավարժական տարբեր մեթոդների ու տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս հաղթահարել բոլոր խոչընդոտներն ու դժվարությունները և համակողմանիորեն նպաստել, ինչպես սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափորոշչային նվազագույն պահանջների ապահովմանն, այնպես էլ նրանց ուսումնական առաջընթացի խթանման ու ընթացիկ առաջադիմության բարելավմանը:

Եզրակացություն

Ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից սովորողների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծական հաշվետվության և գնահատման աշխատանքների կառավարումը ապահովելու համար, անհրաժեշտ է խնդրի ժամանակակից պահանջներին բավարարող գնահատման նոր համակարգի ներդրում:

Հանրակրթությունում գործող գնահատման համակարգում, ժամանակի ընթացքում, ձևավորված ավանդույթները չեն համապատասխանում հարաբերությունների ժամանակակից պայմաններին ու պահանջներին: Այդպիսի համակարգը բավարար չափով չի նպաստում կրթության առաջընթացի խոչնդոտների ու արգելքների վերացմանը և ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Չունենալով գնահատումների համակարգված և վերահսկելի կարգ՝ այն մեծամասամբ կախված է լինում անձնական հայեցողությունից, իսկ աշակերտներին նշանակված գնահատականը ոչ միշտ է հավաստի: Դրա պատճառով առաջանում են տարբեր դժգոհություններ, որոնք չեն նպաստում ոչ կրթության որակի բարելավմանը, և ոչ էլ բարեխիղճ ուսուցչի պաշտպանվածությանը: Այդ և այլ խնդրի լուծմանն էլ պետք է ուղղված լինի ընթացիկ գնահատման ներդրվող մեթոդաբանությունը:

Գրականություն

1. Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգ, 21.01.14թ.
2. Ս.Մակյան, Օ.Միքայելյան «Ուսուցանող ստուգում», Տեղեկագիր 5.2015թ.
3. Ս.Հակոբյան և ուրիշներ «Մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստման եռօրյա դասընթացների նյութերի ժողովածու», Երևան 2007թ.